Արձանագրություն N 2

Երևան քաղաքի Կարապի լճի շրջակա տարածքի բարեկարգման և կանաչապատման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների ձեռքբերման «ԵՔ-ՊԸԱՇՁԲ-16/15» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան

08.11.2016թ.
Ժամը՝ 10:00

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Է. Շաքարյան/ԳԱՊ/
Հանձնաժողովի անդամներ՝ Վ. Գուլգուլյան /գնահատող/, Բ. Տեր-Թովմասյան /գնահատող/, Լ. Գևորգյան /բացող/
Բացակայում էր՝ Ե. Մատասյան /բացող/

1. Տեղեկություններ «ԵՔ-ՊԸԱՇՁԲ-16/15» ծածկագրով գնման ընթացակարգին հայտերի բացման մասին

(Է. Շաքարյան)

Ընդունել ի գիտություն, որ գնման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին՝ 2016 թվականի նոյեմբերի 8-ին, ժամը 10:00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:

2. «ԵՔ-ՊԸԱՇՁԲ-16/15» ծածկագրով գնման ընթացակարգին հայտեր ներկայացրած մասնակիցների մասին

(Է. Շաքարյան)

Գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

h/h	Մասնակիցների անվանումը
1	«Էմ Ջի դիզայն» ՍՊԸ
2	«Երևաննախագիծ» ՓԲԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:

3.Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների մասին

(Է. Շաքարյան)

3.1 Պարզեցված ընթացակարգի մասնակիցների կողմից ներկայացվել են հետևյալ գնային առաջարկները.

h/h	Երևան քաղաքի Կարապի լճի շրջակա տարածքի բարեկարգման և կանաչապատման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքներ					
	Մասնակցի անվանումը	Առաջարկած գինը				
		Ինքնարժեք	Շահույթ	ԱԱՀ	Ընդհանուր	Նախահաշվային արժեքը
1	«Էմ Ջի դիզայն» ՍՊԸ	400 000	40 000	-	440 000	3 500 000
2	«Երևաննախագիծ» ՓԲԸ	1 515 152	151 515	333 333	2 000 000	

3.2 Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկներում չկան թվաբանական անճշտություններ:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:

4.Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և սահմանված պահանջներին դրանց համապատասխանության մասին

(Է. Շաքարյան)

4.1 Մասնակիցների կողմից ներկայացված էլեկտրոնային փաթեթներում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը և դրանք համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

4.2 Գնահատող հանձնաժողովի կողմից մասնակիցների հայտերը էլեկտրոնային համակարգի միջոցով գնահատվել են հետևյալ կերպ.

Մասնակցի անվանումը	Հայտի գնահատականը
«Էմ Ջի դիզայն» ՍՊԸ	Բավարար
«Երևաննախագիծ» ՓԲԸ	Բավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:

5. Պարզեցված ընթացակարգի 1-ին և հաջորդաբար տեղեր զբաղեցնող մասնակիցների մասին

(Է. Շաքարյան)

Գնահատող հանձնաժողովի որոշմամբ «ԵՔ-ՊԸԱՇՁԲ-16/15» ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցնող է ճանաչվել «Էմ Ջի դիզայն» ՍՊԸ-ն, որպես բավարար գնահատված նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից, 2-րդ տեղ՝ ««Երևաննախագիծ» ՍՊԸ-ն:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:

6. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու և 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին ծանուցելու մասին

(Է. Շաքարյան)

6.1 Հիմք ընդունելով <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> ՀՀ կառավարության 168-Ն որոշմամբ հաստատված կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետը՝ գնման ընթացակարգի 1-ին և 2-րդ տեղեր զբաղեցրած մասնակիցների <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշին վերաբերող հրավերով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ 09.11.2016թ. հարցում ներկայացնել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

6.2 09.11.2016թ ծանուցել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին հրավերով սահմանված ժամկետում (երեք աշխատանքային օր) ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը: Հրավերով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովի կողմից կմերժվի առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթերը ներկայացնելու պահանջ կներկայացվի հաջորդ տեղը զբաղեցրած մասնակցին:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ - 0:

7. Պարզեցված ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Է. Շաքարյան)

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ուղարկված եզրակացության և 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված որակավորման փոստաթղթերը ներկայացնելու օրվան հաջորդող աշխատանքային օրը ժամը 10:45-ին, բայց ոչ ուշ քան 15.11.2016թ. ժամը 11:30-ին, Երևանի քաղաքապետարան, Արգիշտիի 1, 3-րդ հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Է. Շաքարյան

Անդամներ՝ ---------- Վ. Գուլգուլյան

---------- Բ. Տեր-Թովմասյան

---------- Լ. Գևորգյան

Քարտուղար՝ ---------- Ա. Համբարձումյան